ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/365 «17» 04 2023 թ.

Ձեր

«ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ

ՓՈՐՁԱՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել **փորձաքրեագիտական ապրանքներ:**

Առաջարկվում է Ձեզ մատակարարել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է **2023 թվականի ՀՀ ՆԳՆ ոստիկանության բյուջեով** նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Բիգ պլաստ» ՍՊԸ-ը** ունի.

1.մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ:

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023/ՓՔՎ/Ա-30** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**